

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—ՔՆՆԵԴՐԱԿԱՆ

Altarmenisches Elementarbuch von A. Meillet, Heidelberg 1913.

Հայերէնի ուսումնասիրութիւնը հետզհետէ պահանջ է դառնում Եւրոպական համալսարաններում ինչպէս լեզուաբանութեան այնպէս և բանասիրութեան համար։ Այդ պահանջի հետ հաւասարապէս զղալի է զուտ լեզուաբանական մեթոդով պատրաստուած դասադրքերի անհրաժեշտութիւնը։ Պ. Պ. Հիրտ և վ. Շարայտրէրդ, որոնց ձեռներեցութեամբ հրատարակւում են Հնդերոպական մատենադարանի (Indogermanische Bibliothek) հատորները, լոյս են ընծայում ահա ծանօթ հայագէտի ներկայ գործը, պատրաստուած յատկապէս զասական հայերէնի ուսումնասիրութեան համար։

Այս աշխատութեան մասին ընդարձակ կը խօսենք մենք այլուր. այստեղ կամնուում ենք միայն մի ամփոփ զաղափար տալ նրա մասին։

Այս զործի կազմութեան համար հեղինակն օգտուել է մասամբ հայերէն քերականութիւններից—Չալըխեան, Մալխանեանց, Գարագաշեան.—մասամբ էլ իր այն յօդուածներից, որոնք հրատարակուած են Փարիզի լեզուաբանական ընկերութեան Մեմորեներում։

Ե. դարու հայ լեզուի ու զրականութեան մասին մի ամփոփ տեսութիւնից յետոյ, որ տալիս է ներածութեան մէջ, և ուր ծանօթանում ենք հեղինակի հայեացքներին որոշ մատենադրական հարցերի վերաբերմամբ, անցնում է. զրեթէ անմիջապէս, բուն զործին, որի զլխաւոր մասերն են ծայնաբանութիւնն (Phonetik) ու ձեւաբնութիւնը (Formenlehre), այս վերջինի հետ խառն նկարագրիլով նաև համաձայնութեան էական մասերը։

Սոյն երկի առաւելութիւնը մեզ ծանօթ նմանօրինակ երկերից ոլէ ոք է որոնել երկու կարեոր հանգամանքների մէջ, որոնք հետեւալներն են—1) ինքնուրունութիւն, 2) օրինակների վաւերականութիւն։

1) Ինքնուրունութիւն ասելով հասկանում ենք հեղինակի սեփական հետազօտութիւնները, որոնց հանդիպում ենք գրեթէ ամէն էջում. օրինակ. §§ 10—17. ուր բազաձայնների արժեքը ճրշտիւ նկարագրելու համար համեմատութեան է առնում յունարէն, պահլաւիկ և տառերէն այն բառերը. որոնք մուտք են զործել հայերէնում և որոնց արտասանութիւնը այդ լեզուներին ծանօթ Եւրոպացի ուսանողին համեմատաբար աւելի ընտանի է։

Դ. Գլուխը, նուիրուած հայերէնի բառակազմութեան, համարեա ամբողջովին, արդիւնք է հեղինակի սեփական դիտողութեան, ինչպէս և յաջորդ գլխում հոլովմանց մասին տուած բացադրութիւնները։ Հոլովմանց ընթացքում բացակայում են զ և ի նախղիրները հայցականի, բացառականի և ներգոյականի սկզբում, քանի որ առանց նախղիրների էլ դրանք մնում են միևնույն հոլովները, ստանալով երբեմն, սկարագայի համեմատ, նաև ուրիշ նախղիրներ։

Ուշադրութեան արժանի է յունական կոչականների սկզբնական ուղղագրութիւնը, որ հեղինակը վերականգնել է հին ձեռադրերից. օր. Պետրե Փոխ. Պետրէ. էջ 51.

2) Օրինակների վաւերականութիւնը, որ ամէն դիտական աշխատութեան հիմքն է կազմում, սոյն աշխատութեան ամենաէական հանդամանքներից մէկն է։ Հեղինակն օրինակները բերում է հայմատենազրութիւնից և Ա. Գրքից, գլխաւորապէս Աւետարանից։ Առաջին կարգի օրինակները նշանակալից են բանասիրական տեսակէտից, որովհետեւ շատ անդամ ինչ որ մենք իրրե հայ շատ հասարակ բան համարելով ուշադրութեան չենք առնում, նա իրրե օտար ուշի ուշով քննում և բացադրում է, որից յետոյ միայն զգում ենք բերուած օրինակի կարեւորութիւնը։ Իսկ այս երկրորդ կարգի օրինակները, բերուած հին ու նոր կտակարաններից, մեղմիջոց են տալիս, բաղդատութեամբ յոյն ընազրի, որ նոյնպէս մէջ է բերում, հեշտութեամբ ու սկարդ կերպով ըմբռնելու հայերէնի առանձնայատկութիւնները հանդէպ յունարէնի։

Սոյն երկու հանդամանքներով, հէնց միայն մեթողի տեսակէտից, ներկայ աշխատութիւնը հանդէս է գալիս իրրե նոր, գնահատելի երեսյթ հայ լեզուի դասադրքերի բաւական երկար շարքում։

Նպատակ ունենալով տալ միայն դասական հայերէնի քերականութիւնը՝ հեղինակը խուսափել է բոլոր յետզասական ձեերից, օր. տերութիւն (դասական՝ տերութիւն), աղուիսու (դասակ. աղուեսու), աներե.—իլ (դաս.—ել), կատ. եզ. եզերծ (դաս. զերծ), ևայլ։

Հեղինակը կամենալով ամէն երեսյթ ըստ կարեւլոյն հիմնովին լուսաբանել, տուել է բազմաթիւ բառերի ամբողջ ստուգաբանութիւնը, ինչ որ ընթերցողին մատչելի է գառնում մանաւանդ աշխատութեան վերջում աւելացրած հայ-գերմաններէն բառզրքոյլի շնորհիւ, վերջինս լինելով միևնույն ժամանակ բացադրուած բառերի մի լիակատար ցուցակ։

Վարժութեան համար զրուած են մի քանի հատուածներ Աւետարանից, Եղնիկից և Բիւզանդից։ Արժէր, ըստ իս. դնել մի հատուած ևս Ազաթանգեղոսից, որից այնքան օրինակներ յիշատակուած են քերականութեան մէջ։

Հակառակ յարդելի հեղինակի և իր աջակից բարեկամների

հոդածութեան՝ զործը դժբախտարար աղաս չէ մնացած մի քանի տպագրական սխալներից, որոնցից գլխաւորներն են էջ՝ 11 ։ ձական փիս. ձական թ-ի, էջ՝ 155 ցածրից 2 րդ տող՝ ստեաց փոխ. առեաց. ի. էջ՝ 198 մրջումն փոխ. մրջիմն:

Թերեւ ներուի ինձ մի դիտողութիւն սոսկ մեթոդի տեսակէտից. Բնդունելով հանդերձ, որ ներկայ աշխատութեան մէջ բացադրուած բոլոր ձեւերը միանգամայն համապատասխան են դասական հայերէնի ողուն. այնուամենայնիւ աւելորդ չոլիտի լինէր. Եթէ հեղինակը հարեանցիօրէն յիշատակած լինէր. յատկապէս զլիսաւոր երեսյթների, նաև յետ դասականները. Այս յիշատակութիւնն անհրաժեշտ է այն տեսակէտից, որ տպադիր հրատարակութիւններից. որոնց միջոցով միայն ուսանողը պիտի ծանօթանայ դասական գրուածներին, ոչ սին զերծ չէ յետդասական ձեւերի տիրապետութիւնից. Կրաւորական անկատար եղ. Գ. Պէմբի նկատմամբ հեղինակներէն արդէն արել է մի փորձ, որ անշուշտ իր օգտակարութիւնը պլոտի ունենայ:

Գինն է՝ տեսարակի ձևով՝ 5 մ. 40 ֆեն. (մօտ 2 ր. 50 կ.), լաթակազմ՝ 6 մ. 40 ֆեն. (մօտ 3 ր.).

Աւելի մանրամասն. ինչպէս ասացինք, կը խօսենք ուրիշ տեղ, հաւանօրէն ի մօտոյ հրատարակելի հայագիտական ժողովածուի մէջ:

Մերույ վարդապետ

ԴԱՍԱԳԻՐՔ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Ա. Եւ Բ. տարի ժողովածու հայ-ժողովրդական, աղպային եւ եւրոպական միածայն եւ երկայն երգերի կազմեց Սոլ. Մելիքեան, Թիֆլիս, զինը իւրաքանչյուրին 25 կուտ.

Երգ-երաժշտութիւնը մեր դպրոցներում որոյէս պարտադիր առարկայ իւր որոշ տեղը ունի, բայց իւր նպատակին չի ծառայում շնորհիւ այն անտարբերութեան, որ նկատւում է մեր դպրոցների զեկագարների կողմից. որտեղ այս առարկան համարելով որպէս երկրորդական առարկայ, դասատւութիւնը յանձնուում է ամեն մի պատահական և ոչ մասնագէտ ուսուցչի. Այս մի կողմից, կանոնաբար դասադրքերի բացակայութիւնը միւս կողմից պատճառ է դասնում այս առարկայի յետաղիմման:

Միթէ ապացուցանելու կարիք կայ, որ կանոնաւոր երգ-երաժշտութիւնը ահազին նշանակութիւն ունի դաստիարակութեան տեսակէտից, որ նա զարդացնում է աշակերտի զեղարուեստական